



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԵՒ ԱՐԾԻՎԸ

1970 թվականի ապրիլին լրացավ Ս. Ս. Մկրտիչ Ա Խրիմյան Հայրիկ Ամենայն Հայոց կաթողիկոսի ծննդյան 150-ամյակը:

Այս հիշարժան տարեթվի առիթով գրված հայրապետական կոնդակը հրահանգում էր 1970 թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում հայոց բոլոր եկեղեցիներում հանդիսավոր հոգեհանգստյան պաշտոն կատարել՝ ս. պատարագի մատուցմամբ, և Բանին կենաց քարոզությամբ պանծացնել անունն ու գործը «լուսաբնակ Ս. Ս. Մկրտիչ կաթողիկոսի Ամենայն Հայոց, Անոր ծննդյան 150-ամյակի առթիվ»:

Հայրապետական կոնդակի հրահանգի համաձայն 1971 թվականի հունվարի 24-ին, կիրակի օրը, Մայր տաճարում եկեղեցական արարողություններով և Վեհարանի հանդիսությանց դահլիճում հոբելյանական հանդիսությամբ նշվեց Վասպուրականի Արծիվ՝ Խրիմյան Հայրիկի ծննդյան 150-ամյակը:

Հայոց Հայրապետը Իր հոբելյանական կոնդակում գեղեցկորեն ու ամբողջական ձեվով բնութագրել էր անունն ու գործը Խրիմյան Հայրիկի, նշելով.

«Լուստ խորան սուրբ Էջմիածնի կամարներու կողքին, սպիտակ մարմարի տակ կը հանգչի մարմինը Վասպուրականի Արծիվ Հայոց Հայրիկին:

Գրելու համար Հայրիկի մասին, պետք է գրիչը թաթխել հայ ժողովուրդի հույզերու և

երազանքներու ավազանին մեջ, զի Ս. Ս. Մկրտիչ Խրիմյան Հայրապետը, համայն հայության գիտակցության մեջ, շատոնց ի վեր փառավորված է անթառամ լուսապսակով՝ իբրև անձնոր քաջ Հովվապետ, իբրև Դաստիարակ հայ շինականի, իբրև Նվազող հայոց դարավոր վշտի, իբրև Ռահվիրա հայրենյաց ազատության: Անոր ոգին կապառնի այսօր ալ հայոց աշխարհի երկնակամարին ներքև, հավատք և հույս ներշնչելով մեր ժողովուրդին, լուսավոր մոր հորիզոններ բաճաղով դեպի ապագան:

Ամենայն Հայոց Հայրիկը կմնա բոլորիս համար կենդանի, պայծառ, իբրև խորհուրդ, իբրև կարապետ, իբրև պատգամ:

Իր կյանքի ընթացքին երկու տեսիլքներ, երկու մեծ իղձեր առաջնորդեցին զԻնք՝ խաղաղությունը և վերաշինությունը հայրենի երկրի ու վերադարձը պանդուխտ հայերու դեպի Հայաստան»:

Վաթսունչորս տարիներ առաջ, 1907 թվականի հոկտեմբերի 29-ին, ս. Էջմիածնի Վեհարանում, 87 տարեկան հասակում, հավիտենապես Իր աչքերն էր փակում Հայրիկն Հայոց:

Այս թվականից սկսած այլևս Խրիմյանը պատկանում է պատմության: Նա դիմացել է ժամանակի անողոր ղառաստանին: Խրիմյանը մի պահ շողաց հայ երկնակամարի վրա որպես գիսավոր աստղ ու աներևույթա-

ցավ՝ լուսավոր հետք թողնելով հայ ժողովրդի պատմության մեջ:

Նա իր պայծառ կյանքով, եկեղեցանվեր ու հայրենաշեն գործունեությամբ ամուր կերպով կանգնել է մեր պատմության անմահ փառքերի լուսավոր հույլի մեջ և հավետ կենդանի է մնում մեր ժողովրդի սրտում՝ որպես սուրբ և առաքյալ, մարգարե և իմաստասեր, բարոյախոս ու հեղափոխական, պատրիարք ու կաթողիկոս:

Խրիմյանը խորունկ մի խորհուրդ էր, աստվածաշնչական մի անձնավորություն: ԺԹ դարի վերջերին մեր եկեղեցական և ազգային տարեգրության մեծագույն դեմքերից մեկը, թերևս մեծագույնը, որը Իր անհատականության դրոշմը դրեց հայ կյանքի վրա: Խրիմյանը մի ամբողջ ժամանակաշրջան էր, մի ամբողջ սերունդ ու մտայնություն:

Իբրև հայ մարդ, հայաստանցի ուսուցիչ ու հրապարակախոս, հոգևորական ու ազգային գործիչ Խրիմյանը մի ոսկեհույ ամբողջություն էր՝ դուրս եկած հայ ժողովրդի ծոցից: Ջերմ էին Նրա խոսքերը, որովհետև բխում էին Նրա սեփական համոզմունքներից: Պայծառ էին Նրա մտքերն ու գաղափարները, որովհետև բխում էին ժողովրդական ակունքներից: Նրա խոսքն ու պատգամը հոգիներ ցնցելու գաղտնիքն ունեին, անքննադատելի ու վսեմ:

Որտե՞ղ փնտրել Խրիմյանի մեծության աղտնիքը, Նրա անվան ու գործունեության հմայքն ու կախարհակը. **Խրիմյանի ժողովրդասիրության մեջ:** Խրիմյանը՝ Ինքը հայ ժողովուրդն էր, «քրիստոնեական քառույթի և ազգային առաքինության ամենեւին սիրելի տիպարներն մին մեր մեջ» (Թորոս արքեպ. Գուշակյան): Ժողովուրդն էր ծնել, սնուցել Նրան, և Նրա մեջ անձնավորել ինքն իրեն, լոկով ու ամբողջական, իր հոգու բոլոր գանձերով, լույսերով, իր իմաստությամբ և խորությամբ: Վաստակականի Արծվի սրտում, հոգում հայ ժողովուրդը, հայոց աշխարհն էր բազմած, իր հույսերով, հավատքով ու վշտերով:

«Ես արծիվ, ցանկացող կենաց և բարաց իմ Հայաստանի... Իմ շրջան ալծմ և հավետ հայրենյաց սահմանի մեջ է... Ես Հայաստանի սիրահար հավ մի եմ. իմ ձայն ու եղանակ Հայաստանի և հայրենասիրի երգ է. թե լամ՝ այդ անունը կհիշեմ, թե գեղգեղեմ՝ այդ անունը կհնչեմ. վերջապես դա իմ սերն է, իմ տերն է. ես մրա անձնանվեր գերին եմ»:

Խրիմյանի համար հայոց աշխարհից և հայ ժողովրդից դուրս չկար ուրիշ աշխարհ, ուրիշ գեղեցկություն:

Կոչման Ձայնն ու պարտականության գիտակցությունը ուր էլ որ կանչեցին Խրիմյանին, Նա Իր հետ տարավ հայության ու Հայաստանի շնչի թարմությունը, հայրենական քաղցրության թույլն ու բույրը:

«Արթնացե՛ք, Հայկա որդիք, արթնացե՛ք... Ո՛վ է վճռեք հայ ժողովրդյան համար, որ այս տգիտության կամ դժոխային զնդանին մեջ հավիտյան տանջվի: **Չողբանք, չհուսահատվինք... Արտասուք սրբենք... Ջեռ ու ոռ շարժենք... Լացողները լացին ու անցան-գնացին. հիներն էին մոքա. մեք մորությամբ շարժենք:**»

Եվ ամեն տեղ, բոլոր հայ սրտերում սրբազին աքաղաղվում էր Խրիմյանի սթափեցնող Ձայնը: Ժողովուրդը լսում էր իր բարի հովիի փրկարար կանչը:

1892 թվականին Խրիմյան Հայրիկը, 72 տարեկան հասակում, 72 քվեներով, Էջմիածնի Մայր տաճարում միաձայն ընտրվեց Ամենայն Հայոց Հայրապետ:

Խրիմյանի ընտրությամբ հայ ժողովրդի սիրտն էր բազմում Լուսավորչի հայրապետական գահի վրա:

Խրիմյանը մեծագործություններ չկատարեց Էջմիածնում: Ժամանակները վատ էին: Կային ներքին և արտաքին բազմապիսի դժվարություններ, որոնք կաշկանդում էին Արծվի թևերը. «Հայրիկ հրաշագործ չէ», սիրում էր ասել Նա, «որ կարենա շուտով իրագործել ազգին բոլոր հույսերը»:

Ազգի հույսերից շատերը մոխրացան ու Խրիմյանը վշտի մեջ փակեց Իր աչքերը, որպես «նուագող վշտից հայրենեաց»:

Խրիմյան Հայրիկի ծննդյան 150-ամյակին նվիրված հարգանքի և երախտագիտության այս խոսքը ավարտում ենք Վեհափառ Հայրապետի կոնդակի հետևյալ գեղեցիկ, պատկերավոր և հայրենաշունչ տողերով.

«Ո՛վ պաշտելի Հայրիկ, տե՛ս ահա, կես դար է արդեն որ խաղաղ է երկիրդ քու նվիրական, մայր հողը ծաղկած է թոռնիկներով աշխատանքով արդար, քու երազած ճարտար հնարքներով արդի գիտության, պրոտուներ տալով մեկի տեղ երեսուն, մեկի տեղ վաթսուն, մեկի տեղ հարյուր: Լեցուն են ամբարները շինականներում, առատ կոսի ոսկեվազ գինին Արարատյան դաշտի, կրքարձրանան քաղաքներն ու գյուղերը մեր շեն, և համայն ժողովուրդը մեր, սուրբ տեղով գեղուն, կապի կառուցելով, կկառուցե երգելով, լույս երազանքներով...»:

Այո, այսօրվա մեր վերածնված հայոց աշխարհում և հայ ժողովրդի երախտագետ սրտում ապրում է Վասպուրականի Արծիվը՝ Հայրիկն Հայոց:

ՏՏ. ԹԻՐՑԻՉ Ա. ՎԵՀԱՓԱՌԵՒ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՍՄՆԱՅՆ ՀԱՅՈՑ

